Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անահիտ Ավանեսյան, Առողջապահության նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները

2025 թվականի ապրիլի 14-16-ը, Արաբական Միացյալ Էմիրություններ, Աբու Դաբի

3. Հրավիրող կողմը

ԱՄԷ Առողջապահության դեպարտամենտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայաստանի մասնակցությունը «Աբու Դաբիի Առողջապահության համաշխարհային շաբաթ» (“Abu Dhabi Global Healthcare Week”) միջոցառմանը ու դրա շրջանակներում կազմակերպված բարձր մակարդակի հանդիպումներին մի քանի կարևոր նպատակ ուներ.

1. Միջազգային համագործակցության խորացում՝ առողջապահական համակարգերի արդիականացման, նորարարությունների ներդրման և բժշկական զբոսաշրջության ոլորտում,
2. Ապագա ծրագրերի մշակման և գործընկերային կապերի հաստատման հնարավորությունների օգտագործում,
3. Հայաստանի առողջապահության ոլորտի բարեփոխումների ներկայացում և փորձի փոխանակում,

4. Միջազգային փորձի ուսումնասիրություն և նորարարական լուծումների քննարկում:

5. Քննարկված թեմաները

Միջոցառման ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները.

1. Ժողովրդագրական փոփոխությունների ազդեցությունը առողջապահական համակարգերի վրա,
2. Կանխարգելիչ բժշկության զարգացումը և տվյալահեն որոշումների կայացման արդյունավետությունը,
3. Նորարարական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները առողջապահության ոլորտում,
4. Առողջապահության ոլորտի ֆինանսական կայունություն և ծախսարդյունավետություն,
5. Բժշկական զբոսաշրջության զարգացման հեռանկարներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մասնակցել եմ «21-րդ դարի առողջապահական համակարգեր» պանելային քննարկմանը, որտեղ հանդես եմ եկել որպես բանախոս՝ ընդգծելով կանխարգելիչ բժշկության և առողջապահության ոլորտում նորարարությունների դերի կարևորությունը:

Հանդիպել եմ.

- **ԱՄԷ Առողջապահության դեպարտամենտի նախագահ Մանսուր Իբրահիմ Ալ Մանսուրիի հետ** — քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր: Ձեռք է բերվել պայմանավորվածություն երկխոսության շարունակման ու կոնկրետ ծրագրերի մշակման վերաբերյալ:
- **Հունաստանի առողջապահության նախարար Ադոնիս Գեորգիադիսի հետ** — քննարկվել են ՀՀ առողջապահության ոլորտում բարեփոխումները, մարտահրավերները և փորձի փոխանակման հնարավորությունները:
- Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոյի հետ — քննարկվել են երկու երկրների առողջապահության ոլորտում համագործակցության խորացմանը միտված հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել.

- Հայ-ԱՄԷ առողջապահական համագործակցության զարգացման վերաբերյալ,
- Հայ-հունական առողջապահական կապերի ամրապնդման և փորձի փոխանակման ուղղությամբ,
- Հայ-ռուսական առողջապահական համագործակցության խորացման և համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Նախաձեռնվել է նոր նախագծերի մշակման գործընթաց:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ակնկալվող արդյունքներ

- Ուղիղ համագործակցության հաստատում ԱՄԷ-ի և Հունաստանի առողջապահական կառույցների հետ,
- Բժշկական զբոսաշրջության ոլորտում ՀՀ հնարավորությունների ներկայացում,
- Նորարարական փորձի ներմուծում առողջապահության համակարգի արդիականացման համար,
- Միջազգային հարթակներում ՀՀ առողջապահության համակարգի ներկայացվածության ամրապնդում և մասշտաբների ընդլայնում:

Գործուղման ֆինանսավորում

Այցի բոլոր ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

Ստորագրությունը, ամսաթիվը

2025 թ. ապրիլ 23

23.04.2025

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 277-Ա 07.04.2025թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը — Արաբական Միացյալ Էմիրություններ ք.Աբու Դաբի
5. Գործուղման ժամկետները — 2025թ.ապրիլի 14-16-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — Գիշերավարձ, օրապահիկ,ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման կարգը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճանապարհորդության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0.0		0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		0.0
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0.0		0.0

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը _____ (ստորագրություն) 08.04.2025թ.